ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունիսի 15-ին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակի առիթով, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուխտի էին եկել Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի մի խումբ ուխտավորներ՝ թեմական առաջնորդ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանի գլխավորությամբ: Մայրավանքում առաջնորդ Սրբազան Հայրը մատուցեց հերթական Ուխտի Պատարագը և Ս. Էջմիածնի խորհրդով իր պատգամն ուղղեց ներկա հավատացյալ բազմությանը:

«Էջմիածինը մեր մայրն է, մեր փառքն է, մեր խիղճն է, որովհետև ինչ որ ունինք քաղաքակիրթ աշխարհին ներկայանալու, մենք այդ բոլորը ստացել ենք Ս. Էջմիածնի միջոցով: Տկարացնել Ս. Էջմիածինը, կնշանակե սառեցնել հայ ժողովրդի հոգին: Էջմիածինը կա և կմնա մեր ժողովրդի ամենանվիրական սրբավայրերեն մեկը»,- ասաց Սրբազան Հայրն իր քարոզում՝ հորդորելով կենդանի և անսասան պահել Հայ Եկեղեցին:

Այս երկրներում Հայ Եկեղեցին երկար տարիների պատմություն ունի: Սակայն համայնավարական վարչակարգի շրջանում ինչպես Ռումինիայում, այնպես և Բուլղարիայում սահմանափակվել էր հայոց հոգևոր համայնքների գործունեությունը, փակվել էին մի շարք եկեղեցիներ: 1990-ականներից ի վեր, ժողովրդավարության հաստատումից հետո, այս թեմերում կրկին ազգային-հոգևոր կյանքը ծաղկում է ապրում, գործում են թեմական խորհուրդներ, որոնք ձեռնամուխ են հայոց եկեղեցիների վերաբացմանը և նորերի կառուցմանը:

Ս. Էջմիածնում, հանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Մայր Աթոռի միաբանության, ուխտավորներին ողջունեց Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, Հայաստանում Ռումինիայի և Բուլղարիայի արտակարգ և լիազոր դեսպանները, հյուրեր:

Հավարտ Ս. Պատարագի ուխտավորներին Վեհարանում ընդունեց Վեհափառ Հայրապետը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ